ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«14» 09 2023թ.
No 008921

«ԲԱՄԵԼԵՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԳՐԻՇԱ ՉԻԲՈՒԽՉՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք, Գայի 39, բն. 39
էլ. հասցե bamelex@mail.ru)

Հարգելի՛ պարոն Չիբուխչյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի սեպտեմբերի 12-ի ««Բամելեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02276/23 վարույթը կարճելու մասին» թիվ 409-Ա որոշման պատճենը:

Տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «7» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Դիանա Մինասյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (236)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 1 նոյեմբերի 2023 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2023 թվականի թիվ 409-Ա

«ԲԱՄԵԼԵՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-002276/23 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի սեպտեմբերի 12-ի նիստում, քննարկելով «Բամելեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Բամելեքս» ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02276/23 վարույթը կարճելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովը 2023 թվականի հունիսի 20-ի ««Բամելեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 293-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 293-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02276/23 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

«Բամելեքս» ընկերությունը թիվ 293-Ա որոշումը չի ստացել, որից հետո այն՝ կից գրությամբ, 2023 թվականի հուլիսի 6-ին տեղադրվել է azdarar.am կայքում և Հանձնաժողովի պաշտոնական կայքում (competition.am): Հետևաբար, «Բամելեքս» ընկերությանը թիվ 293-Ա որոշումը՝ կից գրությամբ, համարվում է պատշաճ հանձնված 2023 թվականի հուլիսի 11-ին: Բացի այդ, 2023 թվականի հուլիսի 6-ին թիվ 293-Ա որոշումը՝ կից գրությամբ, «Բամելեքս» ընկերությանն ուղարկվել է bamelex@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով:

«Բամելեքս» ընկերությունը 2023 թվականի հուլիսի 25-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում**):

2. «Բամելեքս» ընկերության դիրքորոշումը.

«Բամելեքս» ընկերությունը 2023 թվականի հուլիսի 25-ի Դիրքորոշմամբ հայտնել է, որ իր կողմից «NYVA» գրառմամբ կանացի միջադիրների ներմուծումն ու իրացումը չեն կարող շփոթություն առաջացնել «Ռոբերտո Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**), նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, քանի որ Ընկերության կողմից «NIVA» համակցված ապրանքային նշանով ապրանք տարիներ շարունակ չեն ներմուծվել, այդպիսի ապրանքներ շուկայում նրա կողմից չեն առաջարկվել, քաղաքացիական շրջանառության մեջ չեն դրվել:

«Բամելեքս» ընկերությունը հայտնել է նաև, որ միայն «NIVA» համակցված ապրանքային նշանը Ընկերության անվամբ գրանցված լինելու հանգամանքը բավարար չէ «NYVA» գրառմամբ ապրանքների շրջանառությունը անբարեխիղճ մրցակցություն որակելու համար, դրա համար կարևորվում է նաև ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից այն օգտագործելու հանգամանքը, հակառակ դեպքում շփոթություն առաջանալու տեսական հնարավորությունն է բացակայում, հետևաբար նաև՝ անբարեխիղճ մրցակցությունը:

«Բամելեքս» ընկերությունը նշել է, որ հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ թիվ 17397 գրանցման հիման վրա ՀՀ-ում «NIVA» ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրումը չեղյալ հայտարարելու պահանջով, և նաև այս հայցով քաղաքացիական գործի քննության արդյունքներով կարող է հաստատվել «Բամելեքս» ընկերության գործունեության մեջ անբարեխիղճ մրցակցության բացակայությունը:

<u>3. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>

1. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հունիսի 21-ի թիվ 005535 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն 1**) Հանձնաժողովը դիմել է «Բամելեքս» ընկերությանը՝ խնդրելով ներկայացնել տեղեկատվություն «Բամելեքս» ընկերության կողմից «NYVA» ապրանքային նշանով կանացի միջադիրների իրացման սկբնաժամկետի վերաբերյալ՝ նշելով ամսաթիվը:

«Բամելեքս» ընկերությունը, ի պատասխան Գրություն 1-ի, 2023 թվականի հուլիսի 12-ին Հանձնաժողով է ներկայացրել տեղեկատվություն՝ հայտնելով, որ «NYVA» ապրանքային նշանով կանացի միջադիրների առաջին իրացումը եղել է 2022 թվականի դեկտեմբերի 29-ին, իսկ վերջին իրացումը՝ 2023 թվականի մարտի 7-ին:

2. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հուլիսի 7-ի թիվ 006120 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն 2**) Հանձնաժողովը դիմել է Պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝ «Բամելեքս» ընկերության կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների մասին:

ՊԵԿ-ը, ի պատասխան Գրություն 2-ի, 2023 թվականի հուլիսի 12-ին Հանձնաժողովին է տրամադրել համապատասխան տեղեկատվությունը:

3. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի հուլիսի 31-ի թիվ 006871 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն 3**) Հանձնաժողովը դիմել է Ընկերությանը՝ խնդրելով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) 2022 թվականին և 2023 թվականի հունվարի 1-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից «NIVA» ապրանքային նշանով կանացի միջադիրների (այսուհետ նաև՝ **Ապրանք**) ՀՀ ներմուծման ծավալները (առանձնացված՝ ըստ ժամանակահատվածների)՝ կցելով ապացույցներ (ներմուծումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները և այլն),

2) նույն ժամանակահատվածներում Ընկերության կողմից Ապրանքի իրացման ծավալները (առանձնացված՝ ըստ ժամանակահատվածների)՝ կցելով ապացույցներ իրացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները և այլն):

4. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.

1. Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի (այսուհետ նաև՝ **Գրասենյակ**) պաշտոնական կայքի տվյալների համաձայն՝ Ընկերության անվամբ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) 5-րդ դասի ապրանքների և ծառայությունների համար 2011 թվականի օգոստոսի 22-ին գրանցվել և իրավական պահպանություն է ստացել Ապրանքային նշանը (գրանցման համար՝ թիվ 17397), որը պահպանվում է բաց և մուգ վարդագույն, բաց և մուգ կապույտ, սպիտակ և դեղին գունային համակցությամբ, ընդ որում Ապրանքային նշանում բացի «NIVA» բառից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

2. «Բամելեքս» ընկերության անվամբ գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանության ենթակա «NYVA» անվանումով ապրանքային նշան առկա չէ:

3. «Բամելեքս» ընկերությունը ՀՀ է ներմուծում և իրացնում «NYVA» ապրանքային նշանով կանացի միջադիրներ:

4.

5. ՊԵԿ տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Ընկերությունը 2023 թվականին ՀՀ-ում «NIVA» ապրանքային նշանով կանացի միջադիրների իրացում չի իրականացրել:

5. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն.

1) Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2) Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3) Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից բխում է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ, ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ, այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Հանձնաժողովի գնահատմամբ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է, որով պետությունը կարողանում է բարձրացնել հասարակության բարեկեցության մակարդակը, տվյալ ոլորտում պետությունը պետք է հետամուտ լինի ինչպես ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, այնպես էլ տնտեսությանը վնաս հասցնող գործողությունների կանխարգելմանը:

Շարադրվածին համահունչ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը, ի թիվս այլ հարցերի, սահմանել է Օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) նպատակը: Այսպես, Օրենքի նախաբանի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի իրավակարգավորումները նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովմանը և տարածվում են տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ

գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործումը, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

Վերոգրյալ նորմերից բխում է, որ օրենսդիրը ցանկացած պարագայում անբարեխիղճ մրցակցության առաջացման պայման է սահմանել տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացումը կամ դրա հնարավորությունը, որը, ի թիվս այլնի, դրսևորվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործմամբ, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանին:

Միաժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ գրանցված ապրանքային նշանի օգտագործումը չի կարող առաջացնել Օրենքի իմաստով անբարեխիղճ մրցակցություն՝ շփոթության առաջացում, քանի դեռ գրանցված ապրանքային նշանի օգտագործման արդյունքում չի խաթարվում տնտեսական մրցակությունը կամ նման հնարավորություն չի ստեղծում:

Վարույթը հարուցվել է «Բամելեքս» ընկերության կողմից «NYVA» ապրանքային նշանով կանացի միջադիրների իրացման միջոցով Ընկերության, նրա գործունեության և առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից 2023 թվականին «NIVA» ապրանքային նշանով կանացի միջադիրների իրացում չի իրականացվել, որպիսի պայմաններում տնտեսական մրցակցությունը տնտեսավարող սուբյեկտների միջև բացակայում է, հետևաբար խախտման փաստը քննարկել հնարավոր չէ:

Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման, եթե առկա է վարույթի հարուցումը մերժելու որևէ հիմք:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, եթե բացակայում է խախտման դեպքը:

Հաշվի առնելով վերոշարարադրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ ՀԳ-02276/23 վարույթը ենթակա է կարճման:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն որոշմամբ Հանձնաժողովի դիրքորոշումներն արտահայտված են բացառապես մրցակցային իրավունքի լույսի ներքո, ինչը չի բացառում Ընկերության՝ իր իրավունքների (շահերի) պաշտպանությունն իրավասու այլ մարմիններում հայցելու հնարավորությունը:

6. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարճել «Բամելեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02276/23 վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Բամելեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2023 թ. սեպտեմբերի 13
Երևան